

## ԴԱՍ 23. ԳԼՈՒԽ 21 - ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ

### Վերջին հատվածի միատեսությունը

Գլուխ 17. Խորհուրդ Բաբելոն

Գլուխ 18. Խորհուրդ Բաբելոն

Գլուխ 19. Թագավորի վերադարձը

Գլուխ 20. Հազարամյան

### Գլուխ 21. Հավիտենություն

Գլուխ 22. Ամփոփում

1) Եւ տեսա նոր երկինք եւ նոր երկիր. որովհետեւ առաջի երկինքը եւ երկիրն անցան. եւ էլ ծով չ'կա:

**(Մաթ. 6:10): Երկինքն ու երկիրը վերանալու են:** «Ժամանակից» դուրս => հավիտենություն (Եբր. 1:10-12, 12:26,27): «...այլևս ծով չկար»: Ինչու՞ : Դրա մաքրողական հատկության կարիքն այլևս չկար. Երկրագնդի 70%-ը ծածկված է միջինը 2.3 մդոն (3.7կմ) խորությամբ ջրով, որ իր հակաբակտերիալ աղիությամբ (3.5%) աղտահանում, մաքրում և պահպանում է մեր մոլորակը:

**Ծովը վաճառ է** (Մաթ. 8:26, «սաստե՞ց»): Հին կարգի ավարտը (Ել. 20:11, Եզեկ. 48:28), ծովից ելնող գազանը (Դան. 7:1-3,17, Հայտ. 13:1,6-8), Դև խոզերը ապաստան են գտնում ծովում (Մաթ. 8:30), Հոր 26:5-6, Ես. 27:1, Հովսեան 2:1-6, Ղուկ. 8:30-33, Սաղմ. 69:14-15:

**Ել. 20:11** - 11 Որովհետեւ Եհովան վեց օրուայ մեջ արաւ երկինքն ու երկիրը՝ ծոփս ու բոլոր նորանց մեջ եղածները, եւ եօթներորդ օրը հանգստացաւ. նորա համար Եհովան օրհնեց հանգստութեան օրը եւ սրբեց նորան:

Հովհաննեսի օրերում, ծովը նշանակում էր վտանգ, փոթորիկ, բաժանում. նա այդ ժամանակ կղզու վրա էր:

**Նոր երկինք և նոր երկիր** (Մաթ. 24:35, Ես. 65:17, 66:22, Եբր. 11:13-16, Բ Պետ. 3:7-13):

«...երկրի վրա, ինչպես երկնքում»

**Ես. 65:17** - 17 Որովհետեւ ահա ես նոր երկինք եւ նոր երկիր եմ ստեղծում, եւ առաջինները պիտի չհիշվեն եւ միտք պիտի չգան:

**Ես. 66:22** - 22 Որովհետեւ ինչպես որ այն նոր երկինքը եւ այն նոր երկիրը, որ ես ստեղծելու եմ, իմ առաջին պիտի կանգնեն, ասում է Տէրը, նույնպես էլ պիտի հաստատ փսա ձեր սերունդը եւ ձեր անունը:

**Մատ. 24:35** - 35 Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խօսքերս չեն անցնիլ:

**Եբր. 11:13-16** - 13 Սորանք ամենը մեռան հավատքի մեջ. առանց խոստմունքներն ստանալու, այլ հեռվից տեսնում էին նորանց եւ ուրախանում. եւ բարեւում էին եւ դավանում, թէ օտարներ եւ պանդուխտներ են երկրում: 14 Որովհետեւ այնպիսի բաներ խօսողները հայտնի ցույց են տալիս, որ մի հայրենիք են որոնում: 15 Եւ եթէ այն էին հիշում որտեղից իրենք ելան, ժամանակ ունէին նորից դառնալու այնտեղ: 16 Բայց հիմա ավելի ազնիվին են ցանկանում, այսինքն երկնավորին. եւ նորա համար Աստուած ամօթ չի համարում՝ նորանց Աստվածը կոչվելու. որովհետեւ մի քաղաք է պատրաստել նորանց համար:

**2 Պետ. 3:7-13** - 7 Եւ այժմյան **երկինքը եւ երկիրս** նույն խօսքով պահպանուած պահվում են կրակի համար **դատաստանի եւ ամբարիշտ մարդկանց կորստյան** օրում: 8 Բայց այս մէկն էլ ձեզանից ծածուկ չ'լինի, սիրելիներ, որ Տիրոջ մօտ մէկ օրը հազար տարվա պէս է, եւ հազար տարին ինչպէս մէկ օր: 9 Տէրը չի ուշացնի խոստումը, ինչպէս ոմանք ուշացնել են կարծում, բայց երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետեւ չի կամենում որ կորչողներ լինեն, բայց որ ամենն ապաշխարության հասնեն: 10 Բայց Տիրոջ օրը (գիշերվա) գողի պէս կ'գա. որ նորանում երկինքը շառաչունով կ'անցնէ եւ տարերքը կրակով վառուած կ'հալուի, եւ երկիրը եւ նորանում եղած բաներն էլ կ'այրվեն: 11 Հիմա որ սորանք ամենը հալուելու բաներ են. Ի՛նչպէս պէտք է դուք գտնվեք սուրբ եւ աստուածապաշտ վարքում: 12 Սպասելով եւ արտորալով Տիրոջ գալստյան օրին հասնել, որ նորանում երկինքները կրակով այրուած կ'լուծվեն. Եւ տարերքը կրակ ընկած կ'հալվեն: 13 Բայց նորա խոստմունքի պէս՝ նոր երկնքի եւ նոր երկրի ենք սպասում. Որոնցում արդարություն է բնակվում:

2) Եւ ես՝ [Հովհաննէսս] տեսա սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղէմը վայր գալիս Աստուածանից երկնքից պատրաստուած ինչպէս մի զարդարուած **հարս իր մարդու համար**:

Եբր. 11:10,16: «ցած էր իջնում երկնքից». Պարտադիր չէ, որ կպնի երկրին: Երկինքը հստակ վայր է. մի նոր տուն:

### **Նոր Երուսաղէմ – Քրիստոսի խոստումը Զովհ. 14:2-3**

- Երկնավոր Երուսաղէմի ճարտարապետը եւ արարիչն Աստուած է, որին Աբրահամը սպասում էր: Եբր. 11:10
- Այս քաղաքը պատրաստել է նորանց համար ովքեր հավատում են իր խոսքին: Եբր. 11:16
- Երկնավոր Երուսաղէմը կենդանի Աստուծո քաղաքն է: Եբր. 12:22-23
- Վերին Երուսաղէմն ազատ է, որ մեր ամենիս մայրն է: Գաղ. 4:26
- Որովհետեւ այստեղ հաստատ փացող քաղաք չունինք. այլ հանդերձեալն ենք որոնում: Եբր. 13:14

3) Եւ մի մեծ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Ահա Աստուծո խորանը մարդկանց հետ, եւ նա կ'բնակուէ նորանց հետ, եւ նորանք կ'լինեն նորան ժողովուրդ, եւ ինքն Աստուած նորանց հետ կ'լինի նորանց Աստուած:

- Եւ ես իմ խորանը ձեր մէջ կ'դնեմ. Ղև. 26:11
- Եւ Բանը մարմին եղավ՝ եւ **քնակուեց (Greek Skenoo, x5-Յայտ. 21:3)** մեր մէջ. եւ նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից եղած միածնի փառք՝ շնորհքով եւ ճշմարտութիւնով լիքը: Հով. 1:14
- Եւ նորա անունը կկանչէ Էմմանուէլ: Ես. 7:14

4) Եւ կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուքը նորանց աչքերից. եւ մահն այլեւս չի լինի, ոչ սուգ, եւ ոչ աղաղակ. եւ ոչ ցավ այլեւս չի լինի, որովհետեւ առաջիններն անցան: 5) Եւ աթոռի վրա նստողն ասեց. **Ահա ամեն բան նոր եմ անում.** եւ ասեց ինձ. Գրիր. որ այս խօսքերը ճշմարիտ եւ հավատարիմ են: 6) Եւ ինձ ասեց. Եղավ, ես եմ Ալֆան եւ Օմեղան. սկիզբը եւ վերջը. եւ ձրի կ'տամ ծարավին կեանքի ջրի աղբյուրից: 7) **Ով որ հաղթէ, ամենը կ'ժառանգէ.** եւ ես կ'լինիմ նորան Աստուած, եւ նա կ'լինի ինձ որդի:

Նոր սկիզբ: Կարո՞ղ ենք մենք երբևէ պատկերացնել, թէ ինչ է դա նշանակում: Ամե՛ն ինչ:

8) Իսկ **վախկոտների եւ անհավատների**, եւ պիղծերի եւ մարդասպանների եւ պոռնիկների, եւ կախարհների եւ կռապաշտների եւ ամեն ստախօսների բաժինը այս լճում կ'լինի որ կրակով եւ ծծմբով վառուած է: Սա է երկրորդ մահը:

- Սատանան ստախոսների հայրն է Հովհաննէս 8.44 — եւ նրանք ովքեր խաբէությամբ եւ կեղծիքով են զբաղվում, հատկապէս կեղծ ուսուցիչները (տե՛ս 2 Պետրոս 2: 1-3, Հուդ 4, 13): կրակէ լիճը հավիտենական է. վերջնական:

«վախկոտների» եւ «անհավատների»,

**Մար. 4:40 - 40** Եւ ասեց նորանց. Ի՞նչու այդպէս **վախկոտ էք.** Ի՞նչպէս **հավատք չ'ունեք:** Եւ նորանք մեծ վախով վախեցան, եւ իրար ասում էին. Սա ո՞վ է արդեօք. Որ քամին էլ ծոփս էլ հնազանդվում են սորան:

**Յով. 14:27 - 27** Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը **չխռովի եւ չվախենա:**

**2 Տիմ. 1:7-8 - 7** Որովհետեւ Աստված չ'տվեց մեզ երկշտտության հոգի, այլ զօրության եւ սէրի եւ զգաստության: 8 Ուրե՛ս ամօթ մի համարի՛ր մեր Տիրոջ վկայութիւնը, եւ ոչ էլ ինձ որ նորա կապուածն եմ. այլ միասին չարչարուի՛ր ավետարանի համար Աստուծո զօրության համեմատ...

9) Եւ այն եօթը հրեշտակներից մէկը, որ եօթը սկավառակն ունէին վերջի եօթը պատուհասներով լցուած, ինձ մօտ եկավ, խօսեց ինձ հետ եւ ասեց. **Արի ցույց տամ քեզ այն հարսը, որ Գառի կինն է.** 10) Եւ առավ տարավ ինձ հոգով մի մեծ եւ **բարձր սար,** եւ ինձ ցույց տվեց այն մեծ քաղաքը՝ սուրբ Երուսաղէմը, որ վայր էր գալիս Աստուածանից երկնքից. 11) Եւ Աստուծո փառքն ունէր. եւ նորա լուսավորությունը պատուական ակունքի նման ինչպէս բյուրեղացած հասպիս քար:

Սար (Դան.2...). Աբրահամը սպասում էր այս քաղաքին (Եբր. 11:10): (Ի տարբերություն կեղծ հարսնացուի՝ Խորհուրդ Բաբելոնի, որ միաժամանակ ն՛ կին է ն՛ քաղաք, Նոր Երուսաղէմը հավիտենության համար կլինի նույնը, ինչ երկրավոր Երուսաղէմը Հազարամյայի համար):

Քաղաքացիները որոշվում են քաղաքով. Հայտ. 22:3,6,19: «Ցած էր իջնում երկնքից... Նշված չէ, որ այն իջնում է երկրի վրա»:

Եզեկ. 1:22-ի եբրայերեն բյուրեղ բառի և եբրայերեն «սառույց» բառի նմանությունը. ենթադրվում է ադամանդ: Ադամանդը ոսկե հիմքի վրա վայել է հարսնացուին:

12) Որ մեծ եւ բարձր պարիսպ ունէր, եւ տասնեւերկու դուռ ունէր, եւ դռների վրա տասնեւերկու հրեշտակ, եւ նորանց վրա անուններ էին գրուած որ Իսրայելի որդկանց տասնեւերկու ցեղերի անուններն են: 13) Արեւելքից երեք դուռ, հյուսիսից երեք դուռ, հարավից երեք դուռ, եւ արեւմուտքից երեք դուռ: 14) Եւ քաղաքի պարիսպը տասնեւերկու հիմեր ունէր, եւ նորանց վրա Գառի տասնեւերկու առաքեալների տասնեւերկու անունները:

«...**Տասնեւերկու ցեղեր**». շարունակական հիշեցումն այն մասին, որ «փրկությունը հրեաներից է»: Քաղաքի մուտքը Իսրայելի միջոցով է: Չկան միջին պարիսպներ (Եփ. 2:14-18), չկա տաճար (Հովհ. 4:21-24): Առաքյալները հիմքերն են, Քրիստոսը՝ անկյունաքարն է:

Եփ. 2:14-18 - 14 որովհետեւ նա է մեր խաղաղութիւնը, նա, որ երկուսը մէկ դարձրեց. քանդեց իր մարմնի մէջ միջնորմը՝ թշնամութիւնը, 15 եւ հրամաններով տրուած պատուիրանների օրէնքը ջնջեց, որպէսզի իրենով երկուսին ստեղծի մի նոր մարդ եւ խաղաղութիւն հաստատի. 16 Եւ իր խաչով հաշտեցնի երկուսին մէկ մարմնի մէջ Աստծու հետ. քանզի թշնամությունն սպանեց իր խաչով: 17 Եւ եկավ ավետարանեց խաղաղություն ձեզ հեռու եղողներիդ՝ եւ խաղաղություն մօտ եղողներիդ: 18 Վորովհետեւ նրանով է, որ երկուսս էլ արտօնութիւն ունենք մերձենալու չօրը մէկ Հոգով:

15) Եւ ինձ հետ խօսողը մի ոսկի եղեգ ուներ, որ չ'ափեր քաղաքը, եւ նորա դռները, եւ նորա պարիսպը. 16) Եւ քաղաքը **քառակուսի էր**. եւ նորա երկայնությունն այնչափ է որչափ նորա լայնությունը, եւ չափեց քաղաքը եղեգովը, եւ նորա չափը տասնեւերկու հազար ասպարեգ, նորա երկայնութիւնը եւ լայնութիւնը եւ բարձրութիւնը հավասար է: 17) Եւ նորա պարիսպը չափեց հարյուր քառասուն եւ չորս կանգուն. մարդի չափով որ հրեշտակինն է:

Եբր. 11:10 - 10 Որովհետեւ (Աբրահամը) սպասում էր այն հիմունքով հաստատուած քաղաքին, որի ճարտարապետը եւ արարիչն Աստուած է:

Հովհաննէսին ասել էին, որ չափի հին քաղաքը (11-րդ գ.), հիմա նա ներակայացնում է Նոր Քաղաքի չափերը: Ասպարեգներով: Եթէ վերցնենք 600 ոտնաչափ (հին ժամանակների չափերը տարբեր էին), քաղաքը մոտավորապէս կլինէր 1378 մղոն, երկայնութիւնը եւ լայնութիւնը եւ բարձրութիւնը հավասար է: (Սրբությունների Սրբությունը խորանարդ էր):

Այս թվային տարածքը կարող է ամբողջությամբ փակել Կանադայից մինչեւ Մեքսիկայի ծոցը եւ Ատլանտյան օվկիանոսից մինչեւ Կոլորադո նահանգը:

- տասներկու դուռ, տասնեւերկու մարգարիտից, տասներկու հրեշտակ, տասներկու ցեղերի անուններն, տասներկու հիմքեր, տասներկու առաքեալների — տասներկու անունները, եւ նորա չափը տասնեւերկու հազար ասպարեգ:

18) Եւ նորա պարիսպի շինուածքը հասպիս քարից էր. եւ քաղաքը մաքուր ոսկի էր իստակ ապակու նման: 19) Եւ քաղաքի պարիսպի հիմունքը զարդարուած էին ամեն ազնիվ ակունքներով. առաջին հիմը հասպիս, երկրորդը շափիղա, երրորդը քաղկեդոն, չորրորդը զմրուխտ, 20) Հինգերորդը եղնգնաքար, վեցերորդը սարդիոն, եօթներորդը ոսկեքար, ութերորդը բյուրեղ, իններորդը տպագիոն, տասներորդը քրիստապրաստս, տասնեւեկերորդը հակինթ, տասնեւերկուերորդը ամեթովս:

Աստված գեղեցկության Աստված է: Պետրոսը գրում է Աստծո «բազմատեսակ» շնորհի մասին (Ա Պետ. 4:10). բազմատեսակ = բազամանախշ, բազմագույն:

1 Պետ. 4:10 - 10 Ամեն մէկդ ինչպէս որ շնորհք է ընդունել՝ այն իրար մատակարարեցէք. Ինչպէս Աստուծո կերպ կերպ շնորհաց լավ տնտեսներ: (...as good stewards of the manifold grace of God).

## Թանկարժեք քարեր

- Քահանայապետի լանջապանակը (Ել. 28:15-21,31-34, 39:10-14):
- Հմմտ. Երկնային Եդեմ (Եզեկ. 28:13) — Եդեմում՝ Աստուծո դրախտում էիր. բոլոր պատուական քարերը քո ծածկոցն էին՝ ...

Այս քարերը կարող են նաև կապ ունենալ քահանայապետի լանջապանակի հետ (Ել. 28:15-21,31-34, 39:10-14):

21) Եւ տասներկու դուռ տասներկու **մարգարիտից՝** ամեն մէկ դուռը մէկ մարգարիտից. եւ քաղաքի հրապարակը մաքուր ոսկի ինչպէս թափանցիկ ապակի: 22) Եւ տաճար չ'տեսա նորա մէջ, որովհետեւ Տէր Աստուած Ամենակալը եւ Գառն է նորա տաճարը: 23) Եւ քաղաքը ոչ արեգակի եւ ոչ լուսնի **պէտք չ'ունէր**, որ լոյս տան նորա մէջ. որովհետեւ Աստուծո փառքը լուսաւորում էր նորան, եւ նորա ճրագը Գառն էր:

Մարգարիտներ, հմմտ. Մաթ. 13:45,46: Դրանք ծովից են դուրս գալիս, ոչ թէ երկրից: Դրանք աճում են արտաքին ճնշումների ազդեցության տակ: Դրանք վերցվում են իրենց աճման տեղից և դառնում են զարդ: Եկեղցին լինելու է ամենապատվական զարդը:

Մատ. 13:45-46 - 45 Դարձյալ նման է երկնքի արքայությունը մի վաճառական մարդու, որ գեղեցիկ մարգարիտներ է որոնում. 46 Որ մի թանկագին մարգարիտ գտնելով, գնաց ամեն ինչ որ ունէր՝ ծախեց, եւ առավ նորան:

**Ոչ արեգակի եւ ոչ լուսին** - 1 Հով. 1:5 - Աստուած լոյս է, եւ ոչ մի խավար չ'կա նորանում:

**պէտք չ'ունէր** — Դան. 12:3 - Եւ իմաստունները պիտի փայլեն երկնքի հաստատության լոյսի պէս եւ շատերին արդարության առաջնորդողները՝ աստղերի պէս հավիտյանս հավիտենից:

1 Կոր. 2:9-10 - 9 Այլ ինչպէս գրուած է. Ինչ որ աչք չտեսավ եւ ականջ չլսեց եւ մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստուած իրեն սիրողների համար: 10 Բայց մեզ հայտնեց Աստուած իր Հոգով.

24) Եւ [փրկյալների] ազգերը նորա լոյսով պիտի գնան. եւ **երկրի թագավորները** իրենց փառքը եւ պատիվը կ'բերեն նորա մէջ: 25) Եւ նորա դռները չեն փակվի ցերեկը, որովհետեւ գիշեր չի լինի այնտեղ: 26) Եւ ազգերի փառքը եւ պատիվը կ'բերեն նորա մէջ: 27) Եւ բնավ չի մտնի նորա մէջ ոչ մի անմաքրություն անող եւ պղծություն եւ ստություն գործող, բայց միայն նորանք որ Գառնի կեանքի գրքի մէջ գրուած են:

**Ազգերը եւ երկրի թագավորները?** Բոլոր փրկվածները համարվում են ազգեր և

Թագավորներ — միայն նորանք որ Գառնի կեանքի գրքի մէջ գրուած են:

Ես. 60:3-4 - 3 Եւ ման են գալիս ազգերը դէպի քո լոյսը, եւ թագավորները՝ դէպի քեզ վրա ծագած պայծառությունը: 4 Բարձրացրու աչքերդ շուրջանակի եւ տես, բոլորը ժողովուած գալիս են դէպի քեզ. քո որդիները հեռվից են գալիս, եւ աղջկներդ բազուկների մէջ են գրկուած:

- Աստված ակնհայտորեն իրականացրել է իր սկզբնական նպատակը մարդու հետ (Եփ. 2:7):

**Եփ. 2:7 - 7** Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա իր շնորհքի գերազանց մեծությունը, Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունով:

- **Դարպասները երբևէ չեն փակվում.**

եւ էլ ծով չ'կա, արտասուք այլևս չի լինի, մահն այլևս չի լինի, ոչ սուգ, եւ ոչ աղաղակ. եւ ոչ ցավ...